

ՏԵՂԵԿԱԼՔ

2022 թվականին Սյունիքի մարզպետարան

մուտք գործած և մարզպետարանից առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2022 թվականին մարզպետարան է մուտքագրվել՝ 14246 թղթակցություն, առաքվել՝ 9300 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ Նախագահի աշխատակազմից՝ 1, ՀՀ Ազգային ժողովից՝ 11, ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից՝ 4, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 428, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 6, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 1283, հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 1584, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 3405, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 5175, գաղտնի թղթակցություն՝ 143, քաղաքացիներից՝ 2206 դիմում:

ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 202 դիմում, որից՝ ՀՀ Ազգային ժողովից՝ 10, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 126, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 5 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 36, հանրապետական գործադիր մարմիններից՝ 25:

Մարզպետարան մուտք գործած փաստաթղթերին, սահմանված կարգով և ժամկետներում տրվել են համապատասխան ընթացք:

Պարբերաբար մարզպետի մոտ կատարվում է քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ քաղաքացիների ընդունելություն է կատարվում նաև մարզպետի՝ համայնքներ կատարած այցելությունների ժամանակ:

2022 թվականին կատարվել է 135 քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Քաղաքացիների ընդունելության մասին տեղեկատվությունը ամենամսյա պարբերականությամբ ներկայացվում է նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: